

ԲԱՆԱԿԵՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



ՀՊՀՅԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԻՄԱՍՏԱՍԵՐՈ «ԼՈՒԾՄՈՆԵ «ՍԱՀԱՄԱՆԱՑ ԳՐՈՑ» ԵՐԿԻ ՀԵՂԻՆԱԿ

Յ. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆ

Երկու տարի առաջ, վերականգնելով Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» գլուխգործոց աշխատության ցարդ անանուն «Լուծմունքի» ամբողջական տեքստը, Երուսաղեմի սրբոց Յակոբեանց միաբանության մատենադարանի թիվ 434 ձեռագրի հիման վրա հրատարակել էի այն՝ առաջաբանում գրելով. «Իսկ թե ով է իմաստասիրական այս հիասքանչ ստեղծագործության հեղինակը, առայժմ չեմ ցանկանում անդրադառնալ այս հարցին: Ասեմ միայն, որ դեռևս քսան տարի առաջ Ա. Մաղոյանի հետ մասամբ փորձել ենք լուծել նաև հեղինակային պատկանելության հարցը, ուստի վերագրել ենք այն 11-12-րդ դարերի ականավոր գիտնական, բանաստեղծ ու փիլիսոփա Հովհաննես Սարկավագ Իմաստասերի գրչին: Մեր տեսակետը, իհարկե, մասամբ արժանացավ առանձին հայագետների հավանությանը¹, բայց, խոստովանում եմ, բերված փաստերը, լինելով կարևոր, բավարար չէին հարցի վերջնական լուծման համար: Անցած տարիներին շարունակելով այդ ուղղությամբ որոնումներս՝ հավաքել եմ մի շարք նոր փաստեր ու փաստարկներ, որոնք մտադիր եմ առաջիկայում ներկայացնելու առանձին հոդվածով»²: Սույն հոդվածով ցանկանում եմ ներկայացնել դրանք:

Նախ ասեմ, որ մեզանից առաջ խնդրո առարկա «Լուծմունք» Գ. Հ. Գրիգորյանն առանց փաստարկելու վերագրել էր 13-րդ դարի Կիլիկիայի հայոց թագավորության պետական գործիչ ու ականավոր մտածող Վահրամ Բաբունուն³: Ա. Մաղոյանի հետ մեր բերած մերժողական փաստարկները⁴ թողնելով ուժի մեջ՝ կցանկանայի ընթերցողի ուշադրությունը հրավիրել ևս մեկ փաստի վրա, որը կարևոր է մեր ասելիքի տեսանկյունից:

Քանակի մասին անհաղթյան ըմբռնումների կապակցությամբ մեկնիչը գրում է. «Եւ տես, զի երկիր շարունակ քանակ ասէ և իրաւ է, զի թէպէտ մի է, սակայն բազումք ի մի շարե[ա]լ ըստ օրինակի որմոյդ: Զի աշխարհն Պարսից ի Հայոց են կցեալ լերունք՝ և այս օրինակաւ ամենայն աշխարհ» (էջ 90, ընդգծումն իմն է- Հ. Մ.): Այսպիսի օրինակ կարող էր բերել հենց Արևելյան Հայաստանում ծնված ու մեծացած մտածողը: Հարկավ, Կիլիկիայում ծնված ու մեծացած Վահրամ Բաբունին նույնպես կիմանար, որ Հայաստանի անմիջական

¹ Տե՛ս, օրինակ, Կ. Ա. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Եր., 1984, էջ 38:

² Հ. Ղ. Միրզոյան, Արդյո՞ք ամբողջական աշխատություն է «Պատճառ Սահմանաց գրոցն»-ը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2000, թիվ 1, էջ 76-77: Ի դեպ, քանի որ 1980 թ. Ա. Մաղոյանի հետ հրատարակել էինք «Լուծմունքի» ընդարձակ տարբերակի (ունի նաև համառոտ տարբերակ) միայն հիմնական մասի քննական բնագիրը, ուստի ներկա հոդվածում մեջբերումներ կատարելու եմ իմ հրատարակած ամբողջական տեքստից՝ փակագծերում նշելով էջահամարը:

³ Տե՛ս Գ. Հ. Գրիգորյան, Վահրամ Բաբունու փիլիսոփայությունը, Եր., 1969, էջ 21:

⁴ Տե՛ս Ա. Մաղոյան, Հր. Միրզոյան, Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքի» անանուն մեկնությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, թիվ 1, էջ 116-117:

սահմանակից երկիրը Պարսկաստանն է, բայց հազիվ թե բերեր այդ օրինակը:

Երկրորդ, հաշվի առնելով հարցի կարևորությունը, հարկ են համարում կատարել պատմաբանասիրական համառոտ էքսկուրս: Դեռևս նախանցյալ դարի երկրորդ կեսին ականավոր հայագետ Ղ. Ալիշանն առաջադրել է մի վարկած, համաձայն որի Հովհաննես Սարկավագ իմաստասերը, ի թիվս այլևայլ գործերի, պետք է սրբագրած ու մեկնաբանած լինի նաև Դավիթ Անհաղթի «դժարիմաց գրքերը»: Այնուհետև, բնութագրելով Սարկավագ իմաստասերի գրական-ստեղծագործական ոգին ու շունչը, նա ասում է, թե «ինչպես որ ընտիր ընթերցվածներու սիրող էր, այսպես ալ իր գրվածքն ընտիր կուզեր. անոր համար մեծ ջանք ըրած կերևնա գեղեցիկ ոճ մը ստանալու. միանգամայն բարձր ու վսեմ, վասն զի արծիվ միտքն արծիվ թև ալ կուզէ. և հիրավի, իր ամեն գրվածքներուն մեջ կերևին ճարտար ու սովորականէ վեր իմաստասիրական շարադրությունք՝ իմաստակութենէ և արուեստակութենէ հեռու, և միանգամայն պարզ ու խորամիտ, որ մեկէն կը ցուցնէ թե այսպիսի գրվածք միայն իրենն է և ոչ ուրիշի»⁵: Ավելին, Ղ. Ալիշանը, անվերապահորեն հաստատելով, որ «գոտ իմաստասիրական գրվածքներ ալ ուներ», չի բացառել, որ ապագայում կհայտնաբերվեն «այդ ցանկալի գրավոր գանձերը»⁶:

Հարկավ, Ղ. Ալիշանից հետո այլևայլ առիթներով շատերն են գրել Հովհաննես Սարկավագի մատենագրական տարաբնույթ ժառանգության մասին, բայց դրանց մեջ առանձնահատուկ նշանակություն ունի մեծանուն հայագետ Մ. Աբեղյանի կարծիքը: Նա գրել է. «Այս մեծ հեղինակի գրական դեմքը լիովին կայարգվի, երբ նրա բոլոր երկերը, ինչ որ մնացել է, կհավաքվեն և իսկական գիտական եղանակով կհրատարակվեն ու բազմակողմանի կուսումնասիրվեն: Այն ժամանակ մենք կտեսնենք նրա հայացքները, թե ինչպես նա իր լուսավոր մտքով հաճախ բարձր է կանգնած եղել միջնադարյան թանձրամած խավարից՝ մի խուզախնդիր որոնող ոգի, ձգտող իրերը բնական ձևով բացատրելու, մաքառող ընդդեմ սնահավատքի կամ, ինչպես ինքը գրում է, «առասպելական, ստություն», «հիմարների կարծիքների»: Թեև ականավոր գիտնականի ցանկությունը առ այսօր մնում է անկատար, բայց և այնպես հենց Մ. Աբեղյանի հզոր մտքի խորաթափանցության շնորհիվ ուրվագծված է Հովհաննես Սարկավագ իմաստասերի խաղացած շրջադարձային դերը հայ մշակույթի պատմության մեջ: Գնահատելով Սարկավագի «հան իմաստութեան» հիրավի հանճարեղ քերթվածք՝ Մ. Աբեղյանը գրել է. «Այս մեծ (188 երկայն տողերով) քերթվածն իր ձևով ու բովանդակությամբ մի նշանակալից նորություն է մեր հին գրականության մեջ: Եթե դա պատահամամբ փրկված չլիներ կորստից, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար»⁷ (ընդգծումն իմն է- Ղ. Մ.):

Ըհշտ է, ինչպես ասվեց, թեև դեռ չի իրականացվել Մ. Աբեղյանի ցանկությունը, այնուամենայնիվ զգալի գործ է կատարվել Հովհաննես Սարկավագի ինչպես մատենագրական ժառանգության հրատարակման, այնպես էլ գնահատման և իմաստավորման ուղղությամբ: Այդ տեսակետից բարձր գնահատանքի է արժանի Ա. Գ. Արրահամյանի կատարած աշխատանքը: Դեռևս 1956 թ.

⁵ Ղ. Ալիշան, Հուշիկք հայրենյաց հայոց, Բ. Բ. Վենետիկ, 1870, էջ 284:

⁶ Նույն տեղում, էջ 305:

⁷ Համոզված են, ականավոր հայագետը միջնադարագիտության վերջին կեսդարյա նվաճումներին ծանոթ լինելու դեպքում կհրաժարվեր «միջնադարյան թանձրամած խավար» արտահայտությունից, որն, ըստ էության, անցյալից եկող և խորհրդային իրականությանը հաստատագրված կաղապար էր, քան սեփական հետազոտության արդյունք: Քանզի հենց միայն Հովհաննես Սարկավագի գոյությունն ու նրա գեղարվեստական առանգությունն իր իսկ գնահատությունը բավական էին մերժելու համար միջնադարի այդօրինակ որակումը:

⁷ Մ. Աբեղյան, Երկեր, Բ. Դ, Եր., 1970, էջ 69:

⁸ Նույն տեղում, էջ 72:

Մաշտոցի անվ. մատենադարանի ձեռագրերի հիման վրա նա կազմել և հանգամանալից ուսումնասիրությամբ հրատարակել է Հովհաննես Սարկավագի երկերի ժողովածուն⁹, իհարկե ընդգրկելով նրա անունով հայտնի ոչ բոլոր աշխատությունները: Դրանից հետո շատերն են զբաղվել 11-12 դդ. մեծագույն գիտնական, բանաստեղծ, փիլիսոփա և աստվածաբան Հովհաննես Խմաստասերի թողած բազմաբնույթ ժառանգության ուսումնասիրությամբ ու գնահատությամբ¹⁰: Նպատակ չունենալով զբաղվելու կատարվածի արժևորմամբ՝ ասեմ միայն, որ դրանք գերազանցապես իրականացվել են Ա. Գ. Արքահայրանի հրատարակած ժողովածուի հիման վրա: Այդ տեսակետից հաճելի նորություն պետք է համարել «Գանձասար» աստվածաբանական հանդեսի Զ համարում (1996) Մեսրոպ քահ. Արամյանի «Յովհաննէս Սարկավագի «Յաղագս նշանակի հաւատոյ նկիկականն ՅԺԸ-իցն» ժողովածուն» ուսումնասիրությունը (էջ 44-78) և Սարկավագի «Յաղագս նշանակի հաւատոյ նկիկականն ՅԺԸ-իցն» կրոնադավանաբանական աշխատության հրատարակումը, ինչպես նաև նույն հանդեսի նույն համարում Տրդատ քահ. Ուզունյանի հրատարակած բարոյախրատական երկերը (էջ 308-339):

* * *

«Լուծմունք «Սահմանաց գրոց» Դաւթի Անյաղթ փիլիսոփայի» ցարդ անանուն փիլիսոփայական երկը Հովհաննես Խմաստասեր Սարկավագին վերագրելու համար Ա. Մադոյանի հետ մեր բերած հիմնական փաստարկը Սարկավագի «Յաղագս անկիմատր թուոց» աշխատության բացատրական մասի մի ծավալուն հատվածի¹¹ առկայությունն է «Լուծմունքում»: Զուգադրաբար բերելով այդ հատվածները՝ ժամանակի սղության պատճառով հնարավորություն չէինք ունենցել մանրամասն համեմատելու դրանք, ուստի բավարարվել էինք գրելով, որ դա «ոչ թե պատահական միացում է, այլ ձուլված է աշխատության բովանդակությանը: Եվ կարևորն այն է, որ նաև լեզվական առումով է միաձուլվել բնագրին: Առհասարակ պետք է նկատել, որ «Լուծմունքը» լեզվով ու ռոճով անհարիր չէ Հովհաննես Սարկավագի երկերին»¹²:

Նախքան այդ հատվածներն իրար հետ համեմատելը՝ ասենք, որ «Լուծմունքի» մանրակրկիտ ուսումնասիրությունը հանգեցնում է այն համոզման, որ նրա հեղինակն անպայման մաթեմատիկոս է: Այդ է վկայում ոչ միայն խնդրոտ առարկա հատվածի առկայությունը, որի մասին դեռ խոսք կլինի, այլև տարբեր առիթներով մաթեմատիկայի մասին հեղինակի դրսևորած խիստ ուշագրավ պատկերացումը: Օրինակ, համեմատելով բնագիտական և մաթեմատիկական գիտելիքները՝ հեղինակը նկատում է, որ բնության մասին գիտելիքներ կարող ենք ստանալ զգայական փորձով, «առանց ուսման» ու կրթության, մինչդեռ մաթեմատիկական գիտելիքն ստացվում է ոչ այլ կերպ, «եթե ոչ ուսմամբ և տրամախոհությամբ»: Ավելին, ասում է մեկնիչը, ի տարբերություն բնության մասին գիտելիքների, մաթեմատիկական գիտելիքը ոչ թե զգայական է, «այլ յոյժ խոհեմական ի ներմտածմամբ և բազում աշխատանօք» (էջ 89, ընդգծումն իմն է - Ն. Մ.):

⁹ Ա. Գ. Արքահայրան, Հովհաննես Խմաստասերի մատենագրությունը, Եր., 1956:

¹⁰ Հովհաննես Սարկավագի մասին ստեղծված գրականության համեմատաբար ամբողջական ցանկը տե՛ս Տրդատ քահանայ Ուզունեան, Յովհաննէս Սարկավագ վարդապետ, «Գանձասար» աստվածաբանական հանդես, հ. Զ, 1996, էջ 305-307:

¹¹ Ամբողջ բացատրական մասը, չհաշված վերնագիրը, կազմում է 43 տող, որից «Լուծմունքում» առկա է 28 տող, այսինքն՝ ամբողջի շուրջ 2/3-ը (հմտ. Ա. Գ. Արքահայրան, Աշվ. աշխ., էջ 148-149):

¹² Ա. Մադոյան, Հր. Միրզոյան, Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքի» անանուն մեկնությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1980, թիվ 1, էջ 119: Ի դեպ, Կ. Ա. Միրոնյանը տվյալ փաստը համարում է մեր «ենթադրության առավել ծանրակշիռ փաստարկը» (Աշվ. աշխ., էջ 38):

Բերված մտքերից առանձնապես ուշագրավ է վերջինը, քանզի եթե նախորդ դատողությամբ մեկնիչն, ըստ էության, ներկայացնում է մաթեմատիկայի մասին հին աշխարհից եկող և միջնադարում ընդունված պատկերացումը, ապա այստեղ արդեն դրսևորում է մաթեմատիկայի բնագավառում իր ունեցած փորձառությունը: Այո՛, միայն մաթեմատիկական ուսումնասիրությունների և հաշվարկների հարուստ փորձ ունեցող հեղինակը կարող էր ընդունված պատկերացումը ներկայացնելուց զատ ավելացնել նաև, որ մաթեմատիկական գիտելիքը «յո՞ժ խոհեմականն ի ներմտածմամբ և բազում աշխատանք» ստացվող գիտելիք է: Չմոռանանք, որ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը արդեն նորոգել էր հայկական տոմարը, կազմել տարբեր ժողովուրդների տոմարների ամսանունների համեմատական աղյուսակ, գրել անկյունավոր թվերի մասին ծանրակշիռ աշխատություն և այլն, ուստի քաջ գիտեր, որ ցանկացած մաթեմատիկական հաշվարկ կատարելիս կարիք է զգացվում մտավոր կենտրոնացման ու երկարատև աշխատանքի:

«Լուծմունքի» հեղինակի մաթեմատիկոս լինելու մասին վկայող ամենակարևոր փաստարկը, անշուշտ, Սարկավագի աշխատությունից կատարված մեջբերումն է, որն ինքնին հուշում է , որ մեկնիչը ոչ թե սովորական փիլիսոփա է, այլ մաթեմատիկոս-փիլիսոփա: Բանն այն է, որ ոչ մաթեմատիկոսը կբավարարվեր միայն մաթեմատիկայի մասին արևա պատկերացումները շարադրելով և չէր փորձի դրանք հաստատել այնպիսի օրինակներով, որոնցից ինքը զաղափար չուներ: Դա կաներ միայն մաթեմատիկոս փիլիսոփան և հատկապես այն մաթեմատիկոս փիլիսոփան, որն ինքն էր դրա հեղինակը: Իհարկե բացառված չէ, որ այս շրջանում մեզանում լիներ նաև մեկ ուրիշ մաթեմատիկոս-փիլիսոփա, որը ծանոթ լիներ Սարկավագի աշխատությանը և կատարեր նման քայլ: Բայց նախ՝ այդ դեպքում սկզբնաղբյուրներում ինչ-որ ձևով կհիշատակվեր այդօրինակ նշանավոր գիտնականի անունը, թեկուզ նրա աշխատությունները մեզ հասած չլինեին, քանզի շատերը կան, որոնցից գործեր չեն պահպանվել, իսկ եթե պահպանվել են, ապա առայժմ անհայտ ու անանուն են: Երկրորդ, ուրիշը լինելու դեպքում քիչ հավանական է, որ նա կարողանար Սարկավագի աշխատությունից վերցրած բարդ ու դժվարին հատվածն այդպես հեշտությամբ ներդաշնակել իր հարցադրումների հետ՝ ստեղծելով օրգանապես միաձուլյ աշխատություն: Երրորդ, ուրիշը չէր կարող այդպես լայնորեն օգտագործել Հովհաննես Սարկավագի մտքերը և ոչ մի ձևով՝ ուղղակի կամ անուղղակի, չհիշատակել այդ մասին, որովհետև նախ՝ Սարկավագի անունն ու աշխատությունները դեռ թարմ էին ժամանակակիցների հիշողության մեջ, ուստի ոչ ոք իրեն թույլ չէր տա նման բան: Երկրորդ, որ ամենից կարևորն է, մեկնիչը, ինչպես դեռ կտեսնենք, խիստ ուշադիր է իր օգտագործած աղբյուրների հանդեպ և ամեն կերպ ջանում է սահմանազատվել դրանցից: Ասվածի լավագույն հաստատումը կարող ենք տեսնել հենց Սարկավագից վերցրած հատվածին անմիջականորեն նախորդող տողերում, որտեղ «քանակ» հասկացության անհաղթյան ըմբռնման վերլուծության ժամանակ ընդամենը 25 տողում 10 անգամ գործածում է ասել բայի տարբեր ձևեր՝ «զայն ասէ», «որպէս ասէ», «քանակ ասէ» (2 անգամ), «գիծ ասէ», «իմանալի ասաց», «քանակ ասաց», «ինքեան ասէ», «բաղազանեալ ասէ», «եւ ասէ»: Սա նշանակում է, որ մեկնիչն ունի մաթեմատիկոսի մասնագիտական ընդգծված արժանապատվության զգացում և չի ցանկանում, որ ընթերցողը դուրզ-ինչ սխալվի ու Անհաղթի մտքերը վերագրի իրեն՝ մեկնիչին:

Ավելին, մեկնիչը նույնպիսի ընդգծված ուշադրություն դրսևորում է իր օգտագործած բոլոր աղբյուրների, այդ թվում ոչ միայն Պլատոնի, Արիստոտելի, ստոյիկյանների ու անհայտ հեղինակների, այլև ժողովրդական բանահյուսության հանդեպ: Օրինակ, «Լուծմունքում» կարդում ենք՝ «ասեն երիտասարդ ոմն» (էջ 85), «ասեն, թե յաւուրս Պիթագորայ երիտասարդ ոմն» (էջ 85), «որպէս

Պղատոն ուսուցանել» (էջ 87) և այլն: Ծիշտ հակառակն է պատկերը Հովհաննես Սարկավագի պարագային. ոչ մի տեղ և ոչ մի անգամ չի գործածում «սաւ», «ասաց» կամ «սսեն» բայաձևերը: Իսկ չի գործածում, որովհետև, իմ խորին համոզմամբ, հենց Հովհաննես Սարկավագն ինքն է դրա հեղինակը: Բայց եթե այդ մասին չուներք ուղղակի փաստ, ապա կան անուղղակի փաստեր: Նախ՝ ոչ մեկին չվկայակոչելով՝ դրանով իսկ հուշում է, որ ինքն է դրա հեղինակը: Երկրորդ, ամբողջ «Լուծմունքը» գրված է ընթերցողի հետ կենդանի զրույցի ձևով, այսինքն՝ ընթերցողին դիմում է երկրորդ դեմքով՝ գործածելով «տե՛ս», «ծաւնի՛ր», «ուսանիս» բառերը, իսկ ինքը հանդես է գալիս առաջին դեմքով: Դա նշանակում է, որ իր բացատրածից այն, ինչը չի պատկանում ուրիշին, պատկանում է իրեն: Օրինակ, ցուցադրելու համար մաթեմատիկայի և երաժշտության սերտ կապը՝ մեկնիչը գրում է. «Եւ թուի, թէ մինչև ցայս վայր էր ծայնիցն յեղանակքն, որ յարէին և զքնարսն: Եւ թէ այլ գոյր մասունք սոցա, էին իսկ զըլխաւորք այսոքիկ, որպէս և այժմ գոյր՝ յիշատակն ի միջի մերում: Եվ տե՛ս որ և երաժշտականն քանակ է, և ոչ անթիվ և անչափ, վասն որոյ ասաց, թէ ուսումնականն քանակին գոյանայ» (էջ 89-90, ընդգծումն իմն է - Հ. Մ.): Ծիշտ նույն ձևով է կառուցված նաև խնդրո առարկա հատվածի շարադրանքը. մեկնելով տարրորոշ քանակի անհատության ըմբռնումը՝ մեկնիչը գրում է. «Եւ սաւ թէ տարրորոշ քանակն պատուական է, քան զշարունակն այսու օրինակավ, զի կարող գոյ ի միում ժամու Բ կերպարանս ցուցանել, որպէս թիւքդ, որ տարրորոշ և ըստ ինքեան քանակ է և ցուցանէ զայս ինչ ի միում ժամու՝ զբոլոր և զքառանգիւնի, որպէս յորժամ բազմապատկել սկսանիս զԵ թիւն՝ ասելով հնգիցս հինգ, որ լինի Ի և Ե, այս բոլորն, զի հընգէ սկսաւ և ի Ե աւարտեցաւ: Դարձեալ և նոյնդ հընգիս և է քառանգիւնի: Բայց պարտ է գիտել զարհեստ քառանգիւնի թուոցն և է այսպէս» (էջ 90, ընդգծումն իմն է - Հ. Մ.): Նախ՝ դժվար չէ տեսնել, որ մեկնիչը Անհատի մտքերի մեկնաբանությունից այնքան սահուն է անցում կատարել Սարկավագի աշխատությանը կամ, ընդհակառակը, Սարկավագի աշխատությունից վերցրած հատվածն այնպես հեշտությամբ է միացրել նախորդ մտքին՝ ավելացնելով ընդամենը մեկ բառ՝ «որպէս», որ գրեթե անհնար է որոշել, թե որտեղ է ավարտվում մեկնիչի միտքը և որտեղ սկսվում Սարկավագինը: Երկրորդ, թե Սարկավագի աշխատությունից վերցրած հատվածում և թե դրան անմիջապես նախորդող հատվածում մեկնիչը գործածում է «այսպէս», «սոյնպէս» բառերը: Իսկ դա նշանակում է, որ թե մեկի և թե մյուսի հեղինակը նույն անձնավորությունն է, այսինքն՝ նույն ինքը՝ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը: Երրորդ, Սարկավագից մեջբերված հատվածում կան այնպիսի դարձվածներ, որոնք հազիվ թե իսկական մաթեմատիկոսը, որպիսին «Լուծմունքի» հեղինակն է, վերցնէր ուրիշից և նույնությամբ գործածէր որպէս իր մտքեր: Օրինակ, նրանում կարդում ենք՝ «բայց պարտ է գիտել զարհեստ քառանգիւնի թուոցն և է այսպէս», «Եւ յորժամ կամիս քառանգիւնի թիւ առնել, այսպէս է», «Եւ այսպէս մինչև», «Եւ այսպէս, յորժամ ԲԲ աւելցնես ի թողույն», «որքան կամիս, յերկարեմ քառանգիւնիդ», «Դարձեալ և ետանգիւնին այսպէս է» և այլն: Իմ կարծիքով, մաթեմատիկոս Սարկավագի մտքերն այսպիսի ինքնավստահությամբ կարող էր օգտագործել միայն ինքը՝ մաթեմատիկոս Սարկավագ մեկնիչը, որն ուներ մաթեմատիկական հարուստ գիտելիքներ և դրանք մանուկներից ուսուցանելու նույնքան հարուստ փորձ ու հմտություն: Զէ՞ որ Սարկավագն իր «Յաղագս անկիւնաւոր թուոց» աշխատությունը գրել է հենց անկյունավոր թվերի արվեստը սովորել ցանկացող երեխաներին բացատրելու համար: Ըստ այդմ, գրում է. «Ո՛չ թէ զի այդքան որոշմունք անկեանց անկիւնաւորաց թուոցդ պէտք ինչ էին, այլ վասն կրթութեան մանկանց միայն. որչափ զարթուցանել զմիտս խնդրողաց և ո՛չ որքան խնդրէ բնութիւն թուոց: Վասն որոյ բաւական

¹ Ուղղելի է՝ գոյ:

համարեցայ կացուցանել զքանակութիւն դորա մինչև ցքսաներորդ վեցերորդ համար: Իսկ եթէ ախորժեսցէ որ շարժել ևս յառաջ՝ դիրիւն է ի տունցելոցդ՝ որքան և կամեսցի»¹³ (ընդգծումն իմն է - Հ. Մ.):

Չորրորդ, Սարկավագի աշխատության մեզ հետաքրքրող հատվածն ավարտվում է հետևյալ մտքով. «Եւ այսր աղագաւ պատուական համարեցաւ գտարորոշ քանակն, քան զշարունակն, որպեսզի ի միում ժամու զանազան կերպարանդ, որպես ի Ե, որ եղև բոլոր և քառանկիւնի»¹⁴: Նախ՝ «Լուծմունքում» այս հատվածն առաջին հայացքից այն տպավորությունն է թողնում, թե դա Դավթի միտքն է և ոչ թե Սարկավագի: Մինչդեռ Սարկավագն ինքն է ասում, որ տարրորոշ քանակն ավելի պատվական է, քան շարունակ քանակը: Բայց դա այնպես է ձուլված «Լուծմունքին», որ թվում է, թե Անհաղթի մտքերի շարունակությունն է: Այդպես կարող էր շարադրանքը կառուցել մաթեմատիկոս Սարկավագ-մեկնիչը: Առավել ուշագրավ է այն փաստը, որ այս հատվածը «Լուծմունքում» փոքր-ինչ փոխված է, բայց դրանից միտքը դարձել է ավելի կառուցիկ, տրամաբանական և հստակ: Արդ՝ վերը ասվածի ճշմարտացիությունն ընթերցողին անձամբ ստուգելու հնարավորություն ընձեռելու Ապատակով զուգարաբար բերում ենք այդ հատվածները՝ ընդգծելով դրանց միջև եղած էական տարբերությունները, որոնք, կոմ խորին համոզմամբ, փոզուտ «Լուծմունքի» են: Իսկ դա կարող է լրացուցիչ կովան ծառայել Սարկավագի հեղինակության օգտին:

«Լուծմունք»

«...որպէս յորժամ բազմապատկել սկսանիս զԵ թիւն՝ ասելով հնգիցս հինգ, որ լինի Ի և Ե, այս բոլորն, զի հընգէ սկըսաւ և ի Ե ւարտեցաւ: Դարձեալ և նոյն հնգիս է և քառանգիւնի՝: Բայց պարտ է զհտել զարհեստ քառանգիւնի թուոցն և է այսպէս, զի սկիզբն ամենայն քառանգիւնեաց և եռանգիւնեաց, և Ե անգիւնեաց, և Ջ անկիւնեաց և ամենայն թուոյ միակն է: Եւ յորժամ կամիս քառանգիւնի թիւ առնել, այսպէս է. նախ դնել զմիակն և թողուլ ընդ մէջն Բ և առնուլ] զչորքն, և դարձեալ թողուլ ընդ մէջ Դ, և առնուլ Թ, և թողուլ Ջ և առնուլ ԺՋ և թողուլ ութ, և առնուլ ԻԵն: Եւ այսպ[էս մինչև ի] քսան և հինգն քառանգիւնի է և բոլոր: Այսպէս և բոլոր և քառանգիւնի ԼՋն, զի սկսեալ ի վեցէ ի Ջ ւարտեցաւ և է քառանգիւնի, յորժամ ի ԻԵ Ժ թողուս և առնուս զԼՋն զի ըստ առաջին թողուղածոցն, որ ի մէկէն մինչև ի չորքն

«Յաղագս անկիւնատր թուոց»

«Յորժամ բազմապատկել սկսանի զԵ թիւ, ասելով Եիցս Ե՝ լինի ԻԵ, որ է բոլոր և քառանկիւնի, զի և ԵԷն սկսաւ և ի Ե ւարտեցաւ: Դարձեալ նոյն թիւս է և քառանկիւնի: Բայց պարտ է զհտել զարտեստ քառանկիւնի թուոցն: Ջի սկիզբն ամենայն քառանկիւնից, և հինգանկիւնից, և վեցանկիւնից, և եռանկիւնից և ամենայն թուոց՝ միակն է. և յորժամ կամիս քառանկիւնի թիւ առնել, այսպէս է: Նախ դնել զմիակն և թողուլ ընդ մէջն Բ, և առնուլ զԴն և թողուլ ընդ մէջն Դ, և առնուլ Թ և թողուլ Ջ, և առնուլ ԺՋ և թողուլ Ը, առնուլ ԻԵ: Եւ այսպէս քսանոթիւնգ քառանկիւն է և բոլոր: Այսպէս է բոլոր և քառանկիւնի ԼՋ, զի սկսեալ է Ջէ, ի Ջ ւարտեցաւ. և քառանկիւնի՝ յորժամ ի ԻԵԷն Ժ թողուս և առնուս զԼՋն՝ Ջն, ըստ առաջին թողուածուն, որ ի մէկէն մինչև ի Դ թողեր:

¹³ Ա. Գ. Արրահամյան, նշվ. աշխ., էջ 148:

¹⁴ Նույն տեղում, էջ 149:

* Ի դեպ, «անկյուն» բառը տարբեր ձևով է գրվում ոչ միայն համեմատվող աշխատություններում, այլև նույն «Լուծմունքում»: Ավելին, էական տարբերություններ են նկատվում նաև «Լուծմունքի» ձեռագրերի միջև: Հետևաբար, տվյալ դեպքում գործ ունենք գրչական իրողության հետ, որը չի կարող լուրջ կովան ծառայել հեղինակային պատկանելության հարցը լուծելու գործում: Հայտնի է նաև, որ հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում նույնիսկ նույն տարածքի (Ղարաբաղի, Այունիքի) բարբառներում հաճախ տեղի են ունեցել հնչյունափոխության հակասական ու իրարամերձ (խուլերի ձայնեղացման և ձայնեղների խլացման) գործընթացներ (մանրամասն տե՛ս Հ. Դ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, Բ. I, հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 302-303):

թողեր, քանի կամիս յերկարել զքառանգիւնի թիւր, երկու երկու յաւելու ի թողուլդ: Որ թողուի ի մեկէն մինչև ի չորքն՝ երկուք և ի չորքէն մինչև ի յինն՝ չորք և յննէն մինչև ի ժՋն վեց և ի ժՋէն մինչև ի Ի և Են՝ ութ և ի Ի և Են մինչև յԼՋն՝ տասն: Եւ այսպէս, յորժամ ԲԲ յաւելցնես ի թողուլն ըստ առաջին թողոյն, որ ի մեկէն մինչև ի չորքն, որքան կամիս, յերկարես զքառանգիւնիդ: Դարձեալ և եռանգիւնին այսպէս է, որ դնես առաջին զմեկն և թողուս մէկ մի և առնուս զերեքն և յետ երեքին կրկնապատկէ զթողոյն և առնուս զՋն և թողուս Գ և առնուս յԳ: Եւ սոյնպէս միմի յաւելոյ ի թողուլն ըստ առաջին միոյն, որ ի մեկէն մինչև յԳն: Այսպէս է և Ե անգիւնին՝ դնէ զմեկն և առնու Գ, և առնու զԵն և թողու Ջ և առնու ժԲ: Եւ սոյնպէս ի կարգն ԳԳ աւելցնէ ի թողուլն: Այս արուեստ է ի Ջ անգիւնիքն և ի կարգն: Եւ այսր աղագաւ պատուական համարեցաւ զտարորոշ քանակն, քան զշարունակն, որպէս զի ի միում ժամու զանազան կերպարանք բերէ որպէս Ի և Են, որ և՛ բոլոր, և՛ քառանգիւնի:

Քանի կամենաս երկարել զքառանգիւնի թիւն, ԲԲ աւելցու ի թողուլն, որ թողուի: Ի միակէն մինչև ի չորս՝ Բ, և ի Դէն մինչև ի յինն՝ Դ, և յննէն մինչև ի ժՋ՝ Ջ և ժՋէն մինչև ի Ե՝ Ը, և ի Են մինչև ԼՋ՝ ժ: Այսպէս, յորժամ Բ Բ աւելցնես ի թողուլն ըստ առաջին թողոյն, որ ի մեկէն մինչև ի չորս, որքան կամիս, երկարես զքառանգիւնիդ: Դարձեալ և եռանգիւնին այսպէս՝ որ դնես առաջին զմիակն, որ թողուս մէկ մի, և առնուս զԳն և յետ Գին կրկնապատկեայ զթողոյն և առ զՋն և թող Գն և առ զԺն և այսպէս մի մի յաւելոյ ի թողուլն ըստ առաջին միոյն, ի մեկէն մինչև Գ: Այսպէս հինգանգիւնին դրնէ զմեկն և թողու Գ, և առնու զԵ և թողու Ջ, և առնու ժԲ: Եւ այսպէս ի կարգին՝ Գ Գ աւելցնէ ի թողուլն: Այս արուեստ է ի վեցանգիւնիքն, և ի կարգն բերէ: Եւ այսր աղագաւ պատուական համարեցաւ զտարորոշ քանակն, քան զշարունակն, որպէս զի ի միում ժամու զանազան կերպարանք բերէ որպէս Ի Ե, որ և՛ թողու և քառանգիւնի:

«Հոլմհաննես Իմաստասերի մատենագրութիւնը», էջ 148-149:

«Պատեան Սահմանաց գրոցն», ԲԵՆ, էջ 90-91: Փակագծերի մեջ ուղղումները կատարել ենք ըստ քննական բնագրի:

«Լուծմունքը» Սարկավագի գրչին պատկանելու օգտին Ա. Մադոյանի և իմ քերած մյուս կարևոր փաստարկը վերաբերում էր «Լուծմունքի» և «Բան իմաստութեան» պոեմի գաղափարական ընդհանրությանը: Մենք գրել ենք. «Վերջապէս կա մեկ այլ կարևոր հանգամանք ևս. մեկնելով փիլիսոփայության դավթեան սահմանումները՝ հեղինակը գրում է. «Եւ ծանիր որքան և ջանալ մարդն իմաստասիրութիւնն, չկարէ ելանել յայն որ ունէր նախ քան զմեղանչելն: Վասնզի օտարացաք ի բնականն» (579-581): Ինչպէս գիտենք, հենց բնութիւնից մարդու հետացման ու օտարացման գաղափարն է ընկած Սարկավագի «Բան իմաստութեան» հանրահայտ պոեմի հիմքում»¹⁵:

Նախ՝ ասենք, որ Կ. Միրումյանն այդ կապակցությամբ գրել է. «Նրանք միաժամանակ ճիշտ նկատել են «Լուծմունք»-ի հիմնական գաղափարի և Սարկավագի «Բան իմաստութեան...» փիլիսոփայական պոեմի լեյտմոտիվի միջև առկա կապը: Այս նույն հետևությանն է հանգեցնում նաև հիշյալ «Լուծմունք»-ի և Սարկավագի մի շարք այլ երկերի մեր կողմից կատարած համեմատական վերլուծությունը («Յաղագս անկիւնատր թուոց» (ձեռ. N 5254), Մատենադարանի N N 1666, 6453 և ն ձեռագրերում պահպանված աստվածաբանական աշխատությունները)»¹⁶: Ցավոք, Կ. Միրումյանը հստակ չի նշում, թե ինչպիսին է այդ կապը, և որն է իր հետևությունը, բայց և այնպէս ըստ էության պաշտպանում է մեր տեսակետը:

Այժմ ընթերցելով ավելի քան երկու տասնամյակ առաջ «Բան իմաստութեան» հանճարեղ պոեմի հետ «Լուծմունքի» ունեցած կապի մասին մեր գրածը՝ ափսոսում են, որ ժամանակի ու տեղի սղության պատճառով որոշակիորեն չենք ցուցադրել այդ կապն ու ընդհանրությունը:

¹⁵ Ա. Մադոյան, Հր. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 119:

¹⁶ Կ. Ա. Միրումյան, նշվ. աշխ., էջ 38:

Նպատակ չունենալով զբաղվելու պոեմի բովանդակությամբ՝ պարզապես կցանկանալի հիշեցնել միայն, որ այն, լինելով բանավեճ սարյակի և վարդապետի միջև, շոշափում է այնպիսի հարցեր և տալիս այնպիսի պատասխաններ, որոնք այսօր ևս չեն կորցրել իրենց կարևորությունն ու այժմեականությունը: Սկզբում վարդապետը, շոայլորեն գովաբանելով սարյակին, խնդրում է բացատրել, թե ինչպես է կարողանում, ապրելով խիստ համեստ պայմաններում, չունենալով ուսուցիչ ու դաստիարակ, երգել այդքան գեղեցիկ ու քաղցրալուր: Սարյակը, ընդառաջելով վարդապետի խնդրանքին, պատասխանում է.

Ո՛չ մեղայ, ո՛չ մահացայ, ո՛չ կորուսի գոր ընկալայ,
Զաւանդըն պահեցի և տուգանաց ոչ ըզգացի.
Զշինեցի ես աշտարակ, զի յոգնակի դարձեալ մեղայց,
Կամ ընկալայց ըզպատուհաս նմանապէս բանաւորացդ.

Արդ՝ կացի ի բնականին, որոյ պարգևն է յայտնութիւն:

Ներկա դեպքում ինձ հետաքրքրում է վերջին տողի «կացի ի բնականին» քառակապակցությունը: Այն, ըստ էության, պոեմի ամենահիմնական միտքն է, որի շուրջն էլ ծավալվում է սարյակի ու վարդապետի ամբողջ բանավեճը:

Բացարձակապես նույն ոգին ու նույն մտածելակերպը տեսնում ենք նաև «Լուծմունքում»: «Բննարկելով փիլիսոփայության անհաղթյալ սահմանումներից չորրորդը, համաձայն որի փիլիսոփայությունը Աստծուն մտանվելն է ըստ մարդկային կարողության՝ մեկնիչը գրում է. «Եւ նման լինելն Աստուծոյ այն է, որ բնադիր արդարութիւնն մնա և բարեպաշտ կայ, խոհեմ և արի, և ողջախոհ, զի զայս Աստուած եղ ի ստեղծմանն ի մեզ նմանութիւն: Եւ ծանի՛ր, որքան և քանայ մարդ յիմաստասիրութիւն, չկարէ յայն ելանել, յոր ունէր նախ քան զմեղանչելն: Վասնզի օտարացաք ի բնականէն»¹⁷ (ընդգծումն իմն է - Հ. Մ.):

Եթե «Բան իմաստութեան» պոեմի հիմնական գաղափարը, ինչպես տեսանք, սարյակի «կացի ի բնականին» միտքն էր, ապա այստեղ նույն միտքն արտահայտված է մարդու տեսանկյունից: Այլ խոսքով ասած՝ թե մեկ և թե մյուս դեպքում գործ ունենք տառացիորեն նույն մտածողության հետ, այսինքն՝ նույն ճշմարտությունը կենդանու և մարդու տեսանկյունից դիտարկելու դեպքում ունենում ենք տարբեր ձևակերպում՝ կենդանու համար՝ «կացի ի բնականին», իսկ մարդու համար՝ «օտարացաք ի բնականէն»: Հարկ կա՞ ասելու, որ հազիվ թե տարբեր հեղինակների դեպքում ունենայինք նույն երևույթի այսքան նույնական ձևակերպում: Անշուշտ հաճախ է լինում, որ երկու և ավելի մտածողներ նույն երևույթի մասին իրարից անկախ դատում են նույն ձևով, բայց, իբրև կանոն, նույնը նրանք դրսևորում են տարբեր, իսկ լավագույն դեպքում՝ նման, բայց ոչ երբեք՝ նույնական ձևով:

Ի դեպ՝ սա իսկապես որ նոր մտածողություն էր հայ փիլիսոփայական մշտքի պատմության մեջ: Ինչպես տեսանք, Մ. Աբեղյանը «Բան իմաստութեան» պոեմը կարևորել է հատկապես «մեր նոր մտավոր զարգացման տեսությունը» մշակելու տեսանկյունից, այսինքն՝ Սարկավագին համարել է մեր «նոր մտավոր զարգացման» առաջնեկներից մեկը: Կարծում եմ, տարօրինակ ոչինչ չկա, որ պոեզիայում «նոր մտավոր զարգացման» մտնետիկ փիլիսոփա-բանաստեղծը նույնը դրսևորեր նաև փիլիսոփայության մեջ որպես բանաստեղծ-փիլիսոփա:

Պոեմի ամենահիմնական նորությունը, Մ. Աբեղյանի կարծիքով, այն է, որ եթե մինչ այդ արվեստի ստեղծագործական աղբյուր էր դիտվում հայտնությունը, ապա Սարկավագը «բանաստեղծությունը համարում է բնության նմանողություն և ներթողում է բնությունը: Ուշագրավ է, որ նույն հարցը քննարկվում է նաև «Լուծմունքում», և տրվում է նույն լուծումը, ինչ «Բան իմաստութեան» պոեմում: Մեկնիչը, ճիշտ է, տարբերակում է «երածիշտ» և «երածշտագետ» հասկացությունները՝ գտնելով, որ երածշտագետը կարող է քաջ տիրապետել ձայնային արվեստին, բայց չլինել երածիշտ, որովհետև ճշմարիտ «երածիշտն բնականա

¹⁷ Հ. Ղ. Միրզոյան, Աշվ. աշխ., էջ 87:

գոյանայ: «Երաժշտական հմաստաւեր,- գրում է մեկնիչը,- ոչ է աւել գերգեցողն, այլ զհմաստաւերն, զի կատարեալ երաժիշտ բանի բուն երաժիշտն է և ոչ որ ձայնին է գիտակ: Զի երաժիշտն բնականաւ գոյանայ, որպէս լայականութիւնն ի մրմունջն և զերգն հոգևոր» (էջ 86): Իհարկեւ, ասում է մեկնիչը, կատարյալ երաժիշտը պետք է ունենա թե բնատուր ձիրք և թե տիրապետի ձայնային արվեստին, այսինքն՝ լինի երաժշտագետ, այլապես ոչ մեկը և ոչ էլ մյուսը, առանձին վերցրած, դեռ կատարյալ երաժիշտ չեն: «Բայց ծանկիր,- գրում է նա,- որ ճշմարիտ երաժշտական բանականութեամբն գոյանայ և ապա զկնի բանին և զձայն շարժեն» (էջ 90): Սա, ըստ էության, երաժշտության նոր, արվելի բարձր ըմբռնում է, քան միայն հայտնությամբ կամ միայն բանականությամբ բացատրելը: Ընթերցելով երաժշտության մասին մեկնիչի այս և մյուս մտքերը՝ անվարան կարող ենք ասել, որ նա ոչ միայն մաթեմատիկոս-փիլիսոփա է, այլև երաժիշտ ու երաժշտագետ, որպիսին եղել է հենց Հովհաննէս Սարկավազ հմաստաւերը:

Այս ամենն ինձ համար պարզ էր դեռ տարիներ առաջ, ուստի վաղուց կարող էի շարադրել ու եզրակացնել, որ, այո՛, «Լուծմունք «Սահմանաց գրոց» Դաւթի Անյաղթ փիլիսոփայի» ցարդ անանուն փիլիսոփայական հիասքանչ երկի հեղինակը Հովհաննէս Սարկավազ հմաստաւերն է: Կարող էի, որովհետև, բերված փաստերից բացի, այդ են հուշում նաև հայ փիլիսոփայության պատմության իմացությունն և Հովհաննէս Սարկավազի ժառանգության՝ շուրջ քառորդարյա հետազոտողիս ինտուիցիան: Բայց չեմ արել, որովհետև դա կարող էր անբավարար լինել հատկապես թերաւստուս ընթերցողի համբուլու համար: Ուստի, շարունակելով որոնել նոր փաստեր ու փաստարկներ, բարեբախտաբար կարողացա գտնել դրանք:

* * *

Մ. Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 6453 ձեռագիրը կրոնադավանաբանական բնույթի հակաճառությունների ժողովածու է՝ բաղկացած երեք մտածողների նույնաբնույթ գործերից: Դրանցից վերջինի հեղինակը հենց Հովհաննէս Սարկավազն է: Այն ընդօրինակվել է 1787 թվականին՝ «ի հնագոյն և ընտիր օրինակէ», որը, ինչպես ձեռագրի պատվիրատու Սահակ վարդապետ Գեղամեցին է ասում, «յառաջ ժամանակաւ հաւաքեալ է ի մի երանելի վարդապետն մեր Յովհաննէս Եզնկայեցի»: Բարեբախտաբար պահպանվել է նաև Յովհաննէս Երզնկացու «Նախադրութիւն գրոցս» անչափ հետաքրքիր առաջաբանը, որը հարկ ենք համարում բերել ամբողջությամբ. «Նախ քան զմտանել քո ի բանն ընթերցման գրոցս, պարտ է՝ մեզ ցոյցանել զգիտ այս պատուական և բարելի գանձուց նուաստ և տկարոգի Յովհաննէս Եզնկայեցիս սպասար բանի և իմաստից գրոց արքոց-ժարավի՛ յղով ժամանակօք և աշխատութեամբ բազում, առացալ գաւ երեք գիրքս՝ որք են հիմունք հաւատոյ ուղղափառութեան: Եւ թէ զմին մի ի մոցանէ գտանէ ոք՝ բարեբախտութիւն մեծ և փարթաւնութիւն անկշիռ-համարիմ մնա, ժամանանդ զճաշնէք քաղցորաթեան գիտողի, գոր և զտի ես յայլ և յայլ տեղի-և ժամանակի-և ստացալ զերիւ՛ գիրսն և ի-նոցունց դարձեալ ետառու գրել և տն-միմեանս երի և արարի մի գիրք: Առաջին՝ զԱնանիային զհայոց վարդապետի: Երկրորդ՝ զԹորոս վկայ թարգմանչի-և զհգոր գիտնականի: Երրորդ՝ զՍարկավազ վարդապետին և զմեծի-իմաստաւորի զհայապետեցոյ: Եւ թողում գաւ որքսն յետ իմ ժառանգէք, յոգնազան բարեաց ճոխութիւն ամենառատ գանձուց փարթամութիւն, աստուածաբանական հանճարով յերկինս թողցելոց սա թեք զօրատր և վերացուցիչ: Յաշխարհիս ծովիս նաւելոց դէկք՝ վարիչք և ուղղիչք ի մարտս խմբից հերձուածողականացն: Զենք սրելաք յաջողակ ձեռաց քաջամարտից ի խաղաղական ժամու ժողովոց՝ սեղանք երկնատրք և քաղցրաճաշակ լցեալ կերակրովք, վաճառականաց հանճարոյ և հմտագունից՝ մարգարիտ անգիտ և աշխարհաւ ամենայնի գնեալ: Աղքատաց անձաց և նիթականաց անձեռնհասիցն սա ճոխութիւն երկնատր և անհամեմատելի: Իմաստութեամբ լուսատր անձանց՝ արփի լուսաբոյխ և բազմանշոյլ: Անգիտութեան մթով պատելոց՝ ճրագ լուսատու և խաւարափարատ: Սա ձեզ յոյով բարեաց

ըղիմուճն աղբերաց և մեզ հիթ յիշատակի և բարբառ և ձայն առ ձեզ մաղթա-
նաց: Ջի որք օգտիք և զուարճանայք՝ գողորմելի Յովհաննէս յիշեսչիք և մեղու-
ցելոյս անձին և վարդապետին իմոյ և ծնողաց ողորմութիւն ի Քրիստոսէ հայ-
ցեսչիք» (էջ 2ա-բ): Մի կողմ թողնելով գրածի գեղեցկությունն ու խորիմաստու-
թյունը, քանզի հեղինակը հանճարեղ բանաստեղծ էր, փիլիսոփա ու գիտնա-
կան՝ ուշադրություն դարձնենք Երզնկացու այն մտքի վրա, համաձայն որի ինքը
տարբեր վայրերում ու տարբեր ժամանակում ձեռք է բերել համապատասխան
ձեռագրեր, ընդօրինակել տվել դրանք և կազմել ներկա ժողովածուն, որից էլ
բարեխղճորեն ընդօրինակվել է Մատենադարանի թիվ 6453 ձեռագիրը:

Հայտնի է, որ Երզնկացին մահացել է 1293 թ.: Եթե, համաձայն վերոհիշյալ
հաղորդման, ենթադրենք, որ նա իրեն հետաքրքրող ձեռագրերը ձեռք է բերել
70-80-ական թվականների իր շրջագայությունների ընթացքում, ապա բացառ-
ված չէ, որ Սարկավագի ձեռագիրն ստացած ինի Տփղիսում եղած ժամանակ,
գուցե և այցելել է Հաղպատ ու այնտեղ ծանոթացել մեծ իմաստասերի աշխա-
տությանը: Բոլոր դեպքերում մեկ բան ստույգ է, որ եթե Սարկավագի անունով
մեզ հասած կամ նրան վերագրված առանձին աշխատությունների հեղինակա-
յին պատկանելությունը վիճահարույց է, ապա այլ է այս աշխատության պա-
րագան: Նախ՝ Երզնկացու ժամանակ Սարկավագի մահից անցել էր ամենա-
շատը մեկուկես դար, և դեռ թարմ էր նրա հիշատակը, իսկ աշխատություննե-
րը, յինելով սիրված ու փնտրված, չէին աղավաղվել գրիչների կողմից: Այդ է
վկայում ժողովածուում տեղ գտած գործերի մասին Երզնկացու արտահայտած
հիացական կարծիքը. «Եւ թէ զմին ի սոցանէ գտանէ որ՝ բարեբախտութիւն մեծ
և փարթամութիւն անկշիռ համարիմ նմա, մանաւանդ զճաշակ քաղցրութեան
գիտողի, զոր և գտի ես յայլ և յայլ տեղի և ժամանակի և ստացա զերիս գիրսն»
(էջ 2ա): Երկրորդ, ինչպես ասացինք, բացառված չէ, որ Երզնկացին Սարկա-
վագի աշխատությունը ձեռք է բերել Տփղիսում եղած ժամանակ կամ գուցե ան-
ձամբ գնացել է Հաղպատ և այնտեղ ստացել իր փնտրածը: Իսկ դա նշանակում
է, որ այդ դեպքում Երզնկացու բնօրինակի մասին ոչ մի կասկած չի նել չէր կա-
րող: Բայց անկախ այս վարկածից, Երզնկացին, ինչպես տեսանք, իր թողած
«Նախադրութիւն գրոցս» առաջաբանում հաստատապես պնդում է, որ երրորդ
գործը պատկանում է «Սարկաւագ վարդապետին և զմեծի իմաստասիրի զհաղ-
պատեցոյ» գրչին: Ի դեպ, խիստ կարևոր է, որ ժողովածուում տեղ գտած գործե-
րի հեղինակներից Անանիա Սանահնեցուն պարզապես անվանում է հայոց
վարդապետ՝ չգործածելով ոչ մի ածական, Խոսրովիկ թարգամանչին անվանում
է հզոր գիտնական, իսկ Սարկավագին կոչում է հաղպատեցի մեծ իմաստասեր:
Վերջապես, ասենք նաև, որ խնդրո առարկա աշխատության վերջին ուսումնա-
սիրող և հրատարակիչ Մեսրոպ քահանա Արամյանի կարծիքով՝ «Երզնկացու
ժողովածուն մեզ է հասել հինգ գրչագրերով՝ N 504 (ՍՂՄ), N 436 (ՄՄ), N 567
(ՄՄ), N 6453 (ՄՄ), N 275 (ՄՄ)»¹⁶, որոնցից առաջինը՝ 504 (ՍՂՄ), ըստ ու-
սումնասիրողի, «Երզնկացու ինքնագիր» օրինակ է: Անշուշտ, իր տեսակետն
ապացուցելու համար Մեսրոպ քահանա Արամյանը բերում է մի շարք լուրջ
փաստարկներ: Այս պարագայում դա համարելով իմ խնդրից դուրս հարց՝
կցանկանայի ասել, որ նախ՝ Մաշտոցի անվ. մատենադարանի թիվ 6453 ձե-
ռագրի «Նախադրութիւն գրոցս» առաջաբանը տեղ-տեղ նախընտրելի է թիվ
504 ձեռագրի համեմատությամբ: Հավանաբար պատճառն այն է, որ թիվ 504
ձեռագիրը, ինչպես երևում է հրատարակողի ծանոթագրություններից, ունի
անընթեռնելի կամ ղժվարընթեռնելի տեղեր: Երկրորդ, Մ. Մաշտոցի անվ. մա-
տենադարանի թիվ 6453 ձեռագրում Հովհաննէս Սարկավագի «Թաղագս նշա-
նակի...» դավանաբանական աշխատությունն անհամեմատ ավելի ծավալուն

¹⁶ Մեսրոպ քահանայ Արամեան, Յովհաննէս Սարկաւագի «Թաղագս նշանակի
հաւատոյ նիկիական ԹԺԸ-իցն» ժողովածուն, «Գանձասար» աստուածաբանական
հանդես, և. 2, Եր., 1996, էջ 47:

է, քան տպագրվածը: Ըստ այդմ, սովորաբար հղելու ենք թե ձեռագիրը և թե տպագիրը, իսկ տպագրում բացակայող հատվածների համար, բնականաբար, միայն ձեռագիրը: Ներկա դեպքում մեզ համար շատ կարևոր է, որ քննարկելով Սարկավագի այս աշխատության վավերականության հարցը, հեղինակը եզրակացնում է. «Այսպիսով, դժուար չէ նկատել. վերը նշուած փաստերի համադրությամբ բոլոր թղթերը փոխադարձ շաղկապում են, եւ ակնյայտ է դառնում, որ նրանց հեղինակը Յովհաննէս Սարկաւագն է»¹⁹:

Նախքան համադրություններին անցնելը ասեմ նաև, որ համեմատվող աշխատությունները պատկանում են գրական տարբեր ժանրերի, իսկ, ինչպես Մեսրոպ քահ. Արամյանն է գրում, «նույնիսկ միեւնոյն հեղինակի՝ տարբեր ժանրերի պատկանող գործերը կարող են այնպիսի լեզուաոճական տարբերութիւններ ունենալ, որ նոյնիսկ տարակուսելի թուայ նրանց՝ նոյն հեղինակի կողմից գրուած լինելը»²⁰: Հետևաբար, շարունակում է նույն հեղինակը, «այստեղ տառացի համեմատութիւնները կարող են ոչ մի լոյս չսփռել նրանց հեղինակային պատկանելության խնդրի վրա»²¹: Ըստ այդմ, ընթերցողից կխնդրեի ուշադրություն դարձնել ոչ այնքան համեմատվող հատվածների լեզվին, առավել ևս դրանց բառային համընկնումներին, որքան բովանդակությամբ, տրամաբանությամբ և մտածելակերպին, թեև, անշուշտ, անկարևոր չեն նաև լեզվական՝ լինի ոճական թե բառային, ընդհանրությունները: Դա կարևոր է հատկապես Հովհաննէս Սարկավագի պարագայում, քանզի նա լեզվաոճական բազմազանություն է դրսևորում ոչ միայն ստեղծագործության ժանրի պարտադրանքով, այլև շնորհիվ բացառիկ հարուստ լեզվամտածողական կարողության: Ավելին, անգամ իսկ նույնաբնոյթ աշխատություններում Սարկավագը նույն երևույթը կարողանում է արտահայտել լեզվական տարբեր միջոցներով ու ձևերով: Ի հաստատումն ասվածի, բերեմ միայն մեկ օրինակ: «Լուծմունքում» զարգացվում է այն տեսակետը, որ Աստվածորդին մարդացավ, որպեսզի զգա, հասկանա և ճանաչի մարդուն, իսկ դա՝ հանուն այն բանի, որ կարողանա գործել մարդուն մատչելի ու հասկանալի եղանակով: Ըհշտ նույն մտածողությունն ենք տեսնում նաև Սարկավագի հիշյալ դավանաբանական աշխատության մեջ: Ըհշտ է, առերևույթ դրանք կարծես էապես տարբերվում են իրարից, բայց թե մեկ և թե մյուս դեպքում առկա են առանձին բառեր ու բառակապակցություններ, որոնք հուշում են դրանց հեղինակների նույնությունը: Ահա այդ հատվածը.

«Լուծմունք»

«...քանզի սովորեցին մարդիկ մարդոյ մեռելոյ երկրպագել՝ այսր աղագաւ մարդ եղև և մեռաւ, փայտի և վասն այնորիկ ի փայտի խաչեցաւ, քարի և վասն այնորիկ քարեայ՝ դէր տապագի» (Էջ 79, ընդգծումն իմն է - Հ. Մ.):

«Յաղագս նշանակի...»

«Բայց ըստ որում ասացան վայելչականան մերոյս և բնատրականան վարեր՝ ի փրկութիւն մեզ և վասն այնորիկ մարդ եղև, զի զայն ամենայն յանձն առց վասն մարդկան, ապա թէ ոչ, ոչինչ՝ հարկ ի վերա կայր նմա լինել մարդ» (ձեռ. թիվ 6453, էջ 134բ-135ա, տպագ., էջ 285: Ընդգծումն իմն է - Հ. Մ.):

Դժվար չէ տեսնել, որ բերված հատվածներում թեև արտաքուստ քիչ են նույնական բառերը, բայց նախ՝ դրանք շատ կարևոր, կարելի է ասել, հանգուցային բառեր են, որոնք խոսում են դրանց հեղինակի նույնության մասին: Երկրորդ, դրանք բացարձակապես նույնական են իրենց բովանդակությամբ, տրամաբանությամբ ու մտածողության ոճով: Անկողմնակալությամբ ընթերցելով ստորև բերվող հատվածները՝ ընթերցողն անպայման կհամոզվի դրանց բացարձակ համապատասխանության մեջ և կընդունի, որ, իսկապես, ի հայտ է գալիս

¹⁹ Նույն տեղում, էջ 59:

²⁰ Նույն տեղում, էջ 63:

²¹ Նույն տեղում:

* Տպագրում՝ վարի «> է, որը, կարծում եմ, ճիշտ չէ:

** Տպագրում՝ զինչ:

Հովհաննես Սարկավազ Իմաստասերի փիլիսոփայական հիրավի մեծարժեք աշխատություն:

«Լուծմունք»

«Աստուած անպատում անպարագրելի է գոյով բնութիւն յամենայնի եղեալ անհաս եղականաց յաղագս անեղ և անկիրքն գոյոյ նորին և կրկնակի անբաւ ըստ չափոյ և անասման, ճանաչի տեսողաց սկզմամբ և կատարածի, զի անուր և անուստ, անկետ և անգոր. անժամանակ և անփոփոխ, գոր ոչ է ումեք կարողութիւն իմանալ մտօք և կամ բանի պատմել զանճառելիք բանականաց՝ յարագազունիցն...» (էջ 77):

«Վասն որոյ ի դէպ և պատշաճ ժամու պիտոյիք օգնէր նեղելոց: Երբեմն սաստի խնամէր հայրօրէն, երբեմն խրատէր դառնագոյն բարկութեամբ, զնոյն յօգուտ կրողաց օրենս տայր յօգնութիւն, մարգարէս առաքէր զգուշարար և այլ և այլ խնամօք վարէր մարդկան յօգնութիւն» (էջ 77):

«... յետ այսորիկ յաշխարհն իրեանց մեծաւ խնդութեամբ դառնային, ոչ պատուոյ աղագաս, գոր և ոչ առին հաւաստի, այլ յազինս իրեանց սերմանել զուսումն իմաստութեան» (էջ 79):

«...զի երկուցն էր զրկեալ, զի կէս մարմնոյն առողջ և կէսն զոս, ոչ առողջ մարմնով յարեզակն էր և ոչ զօս մարմնով ի դժոխս» (էջ 87):

«Այլ վասն զի երկատրութիւն բնաբանականին և աստուածաբանականին խիտ և երկար է, ասէ, և մեծի լուսաորութեան պէտս ունի, վասն որոյ իրողութեանց թողցուք» (էջ 89):

«Սովորութիւն է սորա զգոյնն պատահում ասել» (էջ 91):

Հարկավ, դեռ կարող ենք շարունակել «Լուծմունքի» և «Յաղագս նշանակի...» աշխատության համանման տեղերի համեմատությունը, բայց ավելի լավ է դիմենք նաև Սարկավազի անունով մեզ հասած այլ երկերի: Ինչպես ասվեց, «Գանձասար» աստվածաբանական հանդեսի նույն հատորում այդպիսի երկեր է հրատարակել նաև Տրդատ քահանա Ուզունյանը: Դրանք են՝ «Հարցումն վասն գայթակղութեան», «Հարցումն վասն մեղաց եւ հանդերձելոց», «Խրատք մանկանց», «Յաղագս կուսութեան» և «Եթէ արժան իցէ թողոյ եղբարս»:

«Յաղագս նշանակի...»

«Արդ պարզից և խառնեցելոց մարմնոց և իմանալոյ՝ էութեանն ինքն է արարիչ միայն անյօղական և պարզ գոյով ըստ բնութեան անորակ, անքանակ, ոչ ի տեղոջ՝, քանզի սորա ի նիւթոյ և ի տեսակէ հաստատելոյ յարմարեալ տուան: Իսկ ամենասուրբ բնութիւնն՝՝ երրորդութեանն գեր ի վերոյ ամենայնի է, վասն որոյ միտք ամենայն և բան տկարանան իմանալ ինչ կամ ասել յաղագս նորա ստուգութեամբ: Բայց զի մի՝ ի կատարեալ եւ ի միայն էասպէս բարոյն՝՝՝ անտի զրկեսցի մարդկային բնութիւնս, չափատրապէս եւ ըստ զիջանելոյ խօսեցաւ առաքելովք և մարգարէիք ընդ մեզ, որոց և երևեցաւ որք անկար էին տեսանել» (ձեռ. թիվ 6453, էջ 131բ-132ա, տպագիր, էջ 280):

«Քէպտ եւ նեցուքեամբ կեղծաորեալ՝ ուրեք ուրեք զճշմարտութիւնն խառնեն, ոչ այլ իրիք աղագաս, այլ զի ստութիւնն հաւանելի գոյ թուեսցի» (ձեռ. թիվ 6453, էջ 138ա, տպագիր, էջ 291):

«... ոչ աստուածութիւնն ի մարմնոյ յեղեալ բնութիւն և ոչ մարմնոյն լուծեալ յամարմնութիւն» (ձեռ. 6453, էջ 134ա, տպագիր, էջ 284):

«Բայց զի արտաքոյ այժմու բանիս և գործոյ մեծի է, լուեսցուք և ի կարգ բանիս երթիցուք» (ձեռ. թիվ 6453, էջ 150բ):

«Սովորութիւն է հաւատացելոյ երթալ ի մատրոնս վկայից առ ի նախանձ բարեպաշտութեան նոցա» (ձեռ. 6453, էջ 154բ):

* Տպագրում իմանալոյ:
** Տպագրում տեղուջ:
*** Տպագրում՝ բնութիւն:
**** Տպագրում՝ բարոյ:

«Հումնունք»

«...որք յորժամ ոչ միայն ոչ ունէից յանձից գուսանելն, այլ և եղծանել կամէից զիմաստասիրութիւնն և առ ոչինչ համարէին» (էջ 79):

«Այլ ասեն, թէ յաւորս Պիթագորայ երիտասարդ ոմն շատ ինչ խօսեր և անհամա: Սաստեաց Պիթագոր՝ Ջիարդ անչափ խօսիս անկապ բերանով, ոչ ումեք յօգուտ իրև զձայն բացազանչման» (էջ 85):

«...յորժամ ծնանի մարդն, չգիտէ ազդմամբ, այսիքն՝ ուսմամբ, այլ գիտէ զօրութեամբ, այսիքն՝ կա ի բնութիւնն իւր զօրութիւն գիտելոյ: Այլ զի մարդն չէ իրև զանասուն, որ զիւրն, զինչ ունի զայն բնութեամբ, այլ ուսմամբ: Վասն այնր ի տղայականն ոչ գիտէ, բայց երբ ուսանի, գիտէ» (էջ 87):

Ես կարող էի նաև այստեղ վերջակետ դնել և հարցը համարել ըստ էության լուծված, բայց հաշվի առնելով հարցի բացառիկ կարևորությունը, ինչպես նաև թերահավատ ընթերցողիս ամեն գնով հակադրվելու վճռականությունը՝ որոշեցի շարունակել որոնումներս: Ուստի ուսումնասիրեցի Մ. Մաշտոցի անվ. մատենադարանի թիվ 1987 ձեռագրում Սարկավազի անունով հայտնի «Դարձեալ յԵւագրեն ի բանից վարդապետին Սարկավազ կոչեցելոյ» աշխատությունը: Ինչպես երևում է վերնագրից, այն Սարկավազի աշխատություններից կատարված յուրատեսակ բանաքաղություն է: Ձեռագիրը թվագրվում է 12-րդ դարով, իսկ դա նշանակում է, որ անհամեմատ մեծանուն է վերջինիս հավաստիության աստիճանը: Նրանում շոշափվում են տարաբնույթ հարցեր, ի մասնավորի՝ տեսական ու գործնական փիլիսոփայության, զգայությունների և բանականության կապի և փոխհարաբերության հարցերը: Օրինակ, պատասխանելով այն հարցին, թե ինչու «ի մտաւոր խորհրդական անձն լինիցի»՝ Սարկավազը գրում է. «Որպէս իմաստուն արք ընդեր ի մտանեն յորժամ խաւսին ինչ վասն գործոց արքունի, նոյնպէս զգայութիւնք յորժամ միաբանեն ընդ մտացն յաստուածագործսն, ընդեր ի մտանեն խորհրդով վասն բարեացն ըստ իմաստուն վարդապետին մերոյ, կամ Մակարա կամ Աթանասի» (էջ 179ա, ընդգծումն իմն է - Զ. Մ.): Ներկա դեպքում մեզ հետաքրքրում է ոչ այնքան ամբողջ պատասխանը, որքան «ըստ իմաստուն վարդապետի մերոյ» բառակապակցությունը: Իրավամբ հարց է ծագում. այդ ո՞վ է մեր իմաստուն վարդապետը, որին վկայակոչում է Սարկավազը: Անտարակույս դա հենց Դավիթ Անհաղթն է, որը իր գլուխգործոց «Սահմանք իմաստասիրութեան» երկի տասնհինգերորդ գլխում

«Հարցումն վասն մեղաց եւ հանդերձեոց»

«...յաղագս այնպիսեացն զի՞նչ ասասցուք, որք ոչ միայն ոչ խնդրեն, այլև զայրոց խընդրուածս համարձակութիւն առ Աստուած...» (Գանձասար, Զ, էջ 317):

«Խրատք մանկանց»

«Ջբարիսն միշտ խաւսեցուք, իսկ զանագուսուն և զհրածարելիսն՝ բնաւ և ոչ երբէք» (նույն տեղում, էջ 319):

«խաւսել զշահաւորսն, լռել յանաւատակարացն, ճանաչել զժամանակ խաւսից եւ լռութեան, քաղցրութեամբ տալ պատասխանի ամենեցուն, եթէ իցէ հնար» (նույն տեղում, էջ 322):

«Ջի եթէ ոչ իմաստնայցեմք ուսմամբք, զիա՞րդ կարգն ըստ բնութեան ամբողջ մնացել, եւ կամ ո՞րպէս յարմարումն լինիցի անձնականաց իրաց, զի այսպէս ասացից, քանզի առանց գիտութեան եւ խորհրդոյ յառաջեն անասնականքն՝ երբեմն ցատումն, երբեմն ցանկութիւն, որք մանաւանդ յարձակողագոյնք ի սկզբանն են եւ դժուար արգելիք, բայց ոչ անհնազանդք բանի: Քանզի սորա մեծացելոյ կըրթութեամբք բաւական լիցի ընկրկել և նահանջել զախտս» (նույն տեղում, էջ 322-323):

* Տողատակի ծանոթագրության մեջ կարդում ենք. «Այստեղ կը վերջանայ ձեռագրի ընդօրինակությունը: Այս գործը մեզի յայտնի չէ ուրիշ ոչ մէկ ձեռագրի մեջ, ուստի կարելի չէրաւ ամբողջացնել» (նույն տեղում, էջ 317):

քննարկելով տեսական ու գործնական փիլիսոփայությունների փոխհարաբերության հարցը, վաղուց ի վեր հստակորեն սահմանազատել ու սահմանել էր դրանց խնդիրներն ու նպատակները՝ տեսականին հատկացնելով ճշմարտությունը, իսկ գործնականին՝ բարին, որը, Դավթի համոզմամբ, «պատուականագոյն է քան զճշմարիտն, որպէս ընդհանրականագոյն և ներպարունակական, քանզի ամենայն որ ճշմարիտ է, նա և բարի է, այլ ոչ ամենայն բարի ճշմարիտ է. քանզի գտաննէք երբեմն և զսուտն բարի, որպէս զոր ասելոց էմք: Ետ ոմն ցոմն յաւանդ սուսեր, և ի ժամանակի բարկութեան չոգաւ խնդրել, որպէս զի սպանումն արասցէ, իսկ նա ուրացաւ, թէ ոչ ինչ էտոր ցիս, և ստեաց: Եւ ահա սուտ, որ բարի գոյ»²²:

Եզրակացությունս պարզ է. «Լուծմունք «Սահմանաց գրոց» Դավթի Անյաղթ փիլիսոփայի» ցարդ անանուն փիլիսոփայական մեծարժէք աշխատության հեղինակը 11-12-րդ դարերի ականավոր գիտնական, բանաստեղծ ու փիլիսոփա Հովհաննէս Սարկավազ Իմաստասերն է: Դրանով մի կողմից միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի ճիսաքանչ հուշարձանը գտնում է իր հեղինակին, իսկ մյուս կողմից հաստատվում է, որ Հովհաննէս Սարկավազը միանգամայն արժանի է «Իմաստասեր» իր պատվանվանը:

Մնում է այսուհետև արժևորել խնդրո առարկա իմաստասիրական երկը և ըստ այդմ՝ նրա հեղինակի տեղն ու դերը հայ փիլիսոփայական մտքի և ընդհանրապէս հոգևոր մշակույթի պատմության մէջ:

Г. К. МИРЗОЯН - Ованес Саркаваз Имастасер автор «Толкования "Книги определений"». - Двамя годами ранее восстановив целостный вид доселе анонимного «Толкования» выдающегося труда Давида Анахта «Книга определений», автор статьи предпринимает ныне попытку прояснить вопрос авторства этого замечательного памятника армянской философской мысли средневековья. Подвергая тщательному логическому и языковому анализу фрагменты вышеназванного сочинения, а также параллельно сопоставляя их с соответствующими частями сочинений видного ученого, философа, поэта и богослова XI-XII веков Ованеса Саркавага Имастасера, автор приходит к заключению, что искомым автором является именно Ованес Саркаваз Имастасер. Тем самым в арменоведении получают свое решение два важных вопроса: 1. донныне считавшийся анонимным ценный философский труд обретает своего автора; 2. подтверждается выдвинутое еще Гевондом Алишаном предположение о том, что перу Ованеса Саркавага должны были принадлежать и ценные философские труды, за что по праву и удостоен был он почетного имени Имастасер (философ).

²² Դավթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագիրը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի, Եր., 1980, էջ 85-86: